ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 փետրվարի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

19
(2869)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՏՈՆՅԱԼ ԵՐԵՄՅԱՆՆԵՐԸ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՐԵԼԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Yeremyan projects

TAVERN YEREVAN | Yerevani SHAURMA | LAVASH RESTAURANT | SHEREP RESTAURANT | TAVERN YEREVAN riverside

Smoking Chef | LIVINGSTON restaurant | ITALIAN RESTAURANT CASA NOSTRA | Renommée RESTAURANT

«Ժողովուրդ» օրաթերթը, Yeremyan Projects-ի շուրջ աղմկահարույց բացահայտումներին զուգահեռ, սկսում է շարք, թե ինչպես Yeremyan Projects-ը դարձավ ներկայիս իշխանությունների սիրելի ընկերությունը:

Բանն այն է, որ բացի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաքին անհայտ աղբյուրից խոշոր գումարներ հանգանակելուց, Դավիթ Երեմյանի ընկերությունները մասնակցում են պետական մասշտաբի տարբեր մրցույթների: Հաղթում են այդ մրցույթները մեկ պարզ հանգամանքի շնորհիվ՝ իշխանության հետ լավ հարաբերությունների մեջ են:

Օրինակ՝ 2024 թվականի սկզբից մինչ այսօր «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի հետ Ազգային ժողովը կնքել է 5 մլն դրամ արժողությամբ պայմանագիր: Ընկերության կողմից որպես լիազոր անձ հանդես է գալիս Ալեքսանդր Գասպարյանը: Պայմանագիրը կնքված է մինչեւ սույն թվականի դեկտեմբերի 30-ը:

Ըստ պայմանագրի՝ ՍՊԸ-ն պարտավորվում է կազմակերպել պատվիրակությունների ընդունման հյուրասիրության ծառայությունների մատուցում:

Ծառայություններում, ըստ պայմանագրում տեղ գտած բնութագրի, նշված է, որ պետք է մատուցվեն տաք եւ սառը խորտիկներ, տաք ուտեստներ, ապուրներ, տաք ըմպելիքներ, աղցաններ, խավարտներ, ալկոհոլ եւ այլ ուտեստներ:

Այս պայմանագրով նշված բոլոր ծառայությունները մատուցվելու են այն ռեստորաններում, որոնք պատկանում են Երեմյաններին, օրինակ՝ «Լիվինգսթոն», պանդոկ «Երեւան Գետափին», «Լավաշ», «Կազան Նոստրա», «Շերեփ» եւ այլն: Ընդ որում՝ շատ դեպքերում ծնունդների, կնունքների, ատամհատիկների կողքին պաշտոնական պատվիրակություններ են ընդունվել:

Հետաքրքիրն այն է, որ պատվիրակություններին հյուրասիրելու համար նախատեսված է 78 հազար դրամ արժողությամբ սեւ ձկնկիթ, բրենդի Erebuni 50 եւ 70 տարեկան, որոնց արժեքը համապատասխանաբար 115 հազար եւ 250 հազար դրամ է: Պատվիրակությունները նաեւ փորձելու են 315 հազար դրամ արժողությամբ Don Perignon Limited շամպայնը: Հետաքրքիրն այն է, որ այս շամպայնի 0,75 մլ Don Perignon Vintage տարբերակը սուպերմարկետներում արժի 130 հազար դրամ, իսկ Don Perignon Vintage Rose 0,75 մլ արժե 225 հազար դրամ:

Պայմանագրի գնման ընթացակարգը կատարվել է մեկ անձից սկզբունքով, եւ այլ ընկերության շանս չի տրվել կատարելու այս ծառայությունը, ինչը խոսում է հնարավոր «պոզով եւ պոչով» կոռուպցիայի մասին:



Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի երեկվա հրաժարականն անակնկալի է բերել ՔՊ-ականներին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ում մի քանի հոգի են իմացել միայն նախարարի հրաժարականի մասին, իսկ մյուսները նրա գրառումից են իմացել լուրն ու անակնկալի եկել: Ավելին՝ ՔՊ-ականների, մասնավորապես՝ խորհրդարանականների սրտով այնքան էլ չի եղել Քերոբյանի հրաժարականը. ոմանք նաեւ անթաքույց ափսոսանք են հայտնել, քանի որ լավ հարաբերություններ են ունեցել նրա հետ. ի տարբերություն շատ այլ նախարարների՝ Քերոբյանը մշտապես հասանելի է եղել թիմակիցների համար, ու նրա հետ կարողացել են աշխատանքը հեշտ կազմակերպել: Մի խոսքով, մինչեւ չգա հետինը, չի հիշվի առաջինը:



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շարունակում է փնտրել կառավարական կաբինետի նոր անդամների: «Ժողովուրդ» օրաթերթի՝ կառավարությանը մոտ կանգնած աղբյուրները փոխանցում են, որ Փաշինյանը նպատակ ունի «հեղափոխություն» իրականացնել կառավարության ներսում՝ առաջիկայում շատերին անակնկալ պաշտոնանկ անելով: Ըստ մեր աղբյուրների՝ այս պահին միակ անձեռնմխելի անձը ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն է, որի աշխատանքից, կարծես թե, գոհ են եւ՛ Փաշինյանը, եւ՛ իշխանության, եւ՛ ՔՊ վերնախավի ներսում: Մեր աղբյուրները չեն բացառում, որ Փաշինյանը այդ հարցում եւս մտափոխվի: Գերատեսչության բոլոր ղեկավարներից, կառավարության ենթակա բոլոր մարմիններից, վարչապետին ենթակա բոլոր մարմինների ղեկավարներից Փաշինյանը դժգոհ է ու մարդկանց է փնտրում՝ մեկը մյուսով փոխարինելու համար: Վարչապետը կադրային լուրջ խնդիրների առաջ է կանգնած. օրենսդիր մարմնի անդամներին, որոնք իր հավատարիմներն են, վստահում է, առաջարկում է տեղափոխվել գործադիր մարմին: Այդ հարցում, սակայն, դեռեւս հաջողություն չունի. պատգամավորները հրաժարվում են նախարարի պորտֆեյլ վերցնել: Այս պահին Փաշինյանի հույսը կադրային բանկն է, բայց, ըստ ՔՊ-ական մեր աղբյուրների, այնտեղից էլ չի կարողանում մարդ գտնել:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատակազմը 2024 թվականի հունվարի 30-ին ձեռք է բերել սրճեփ, որի արժեքը կազմել է 299 հազար 999 դրամ: Սրճեփը եղել է DELONGHI մակնիշի, իսկ մակնիշը՝ ECAM290.31.SB: Ըստ պայմանագրի՝ սրճեփը պետք է ունենա հետեւյալ բնութագիրը՝ աղացի աստիճանների քանակ՝ 13, աշխատանքային ճնշումը՝ 15 բար, սուրճի պատրաստման տեսակները՝ աղացած/հատիկավոր, հատիկավոր սուրճի տարայի տարողությունը՝ առնվազն 250 գրամ, հզորությունը՝ 1450 Վտ, ջրի տարողությունը՝ 1.8լ, ավտոմատ անջատման եւ գավաթի տաքացման ֆունկցիոնալությամբ, էկրանի, ջրի ֆիլտրի եւ շարժական կաթի տարայի առկայություն, սուրճի պատրաստման տեսակները՝ էկսպրեսսո, կապուչինո, լատե, մակիատո: Ապրանքը պետք է լինի նոր եւ չօգտագործված: Գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Սրճեփի երաշխիքը նախատեսված է մեկ տարի ժամկետով: Հավելենք նաեւ, որ վարչապետի աշխատակազմը 2018 թվականից կենցաղային տեխնիկաներ գնելու հակում ունի: Գնվում են 500 հազար դրամանոց հեռուստացույցներ, գնվել է 35 սառնարան՝ 1 մլն 960 հազար դրամ ընդհանուր արժեքով: Ստացվում է, որ վարչապետին ենթակա մարմիններն ամեն ինչ անում են իրենց տանը զգալու համար:

ԶՐՈՒՅՑ

««ՊՐԻԴՈՒՐՈԿԻ» ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԱՐԿԵԼ Է»

«Հանրային ձայն» կուսակցության ընտրական ցուցակի երկրորդ համարը զբաղեցնող Տիգրան Ուրիխանյանը դեռ նախորդ տարի՝ սեպտեմբերին, ավագանու անդամի մանդատից հրաժարվելու դիմում էր ներկայացրել, սակայն նրա դիմումը մինչ օրս չի հաստատվել, ու փաստացի նա շարունակում է հանդիսանալ ավագանու անդամ՝ չներկայանալով նիստերին: Քաղաքային իշխանությունն ընդամենը օրեր առաջ մանդատից զրկեց ավագանու անդամներ Հայկ Մարությանին, Սոնա Աղեկյանին եւ Նարինե Հայրապետյանին՝ անհարգելի բացակաների եւ խվեարկություններին չմասնակցելու հիմքով: Մինչդեռ, մյուս խմբակցությունում՝ «Հանրային ձայն»-ում եւս կան երկու անդամներ՝ Արսակ Գալստյանը եւ Տիգրան Ուրիխանյանը, որոնք առհասարակ նիստերին չեն մասնակցել, բանի որ Արսակ Գալստյանը կալանքի տակ է, իսկ Ուրիխանյանի նկատմամբ քրեական հետաքննում է հարուցված. նա երկրում չէ: Քաղաքային իշխանությունները, սակայն, ձեռնպահ մնացին որեւէ քայլ ձեռնարկել «Հանրային ձայն»-ի անդամների նկատմամբ: Այս առիթով մի բանի հարց ենք ուղղել Տիգրան Ուրիխանյանին:

-Պարոն Ուրիխանյան, ինչպե՞ս ստացվեց, որ Ձեր նկատմամբ իշխանությունները բարեհաճ գտնվեցին ու Ձեզ մանդատից չզրկեցին: Ձեզ համար հասկանալի՞ է պատճառը:

-Կարծում եմ, այո՛, «պրիդուրոկի» իշխանությունը հաշվարկել է, որ հենց մեկ ձայնի տարբերությունը, որով իշխանություն կոչեցյալը պարտվեց մայրաքաղաքում ընդդիմադիր եւ իբր ընդդիմադիր ուժերին, հիմա այդ մեկ ձայնը չեզոքացված է պահում: Ակնհայտ է իրենց շահագրգռվածությունը, բայց դա երկար տեղի չի ունենա, վաղ թե ուժ մանդատն անցնելու է այլ մարդու, ոը եւ անակնկալներ կմատուցի իշխանությանը, ներկա է գտնվելու նիստերին: Այսինքն՝ ինձ մանդատից չեն զրկում, բայց միեւնույն ժամանակ կոչեր հնչեցնելու համար քրեական գործը առկախված պահում են, որպեսզի օգտվեն այդ մեկ ձայնի բացակայությունից:

-Իսկ ավագանու մյուս անդամներին մանդատից զրկելը Ձեզ համար ընդունելի՞ էր, ի՞նչ գնահատական կտաք:

-Շատ վատ եմ վերաբերվում. փառք Աստծո, իմ մանդատն ինձ մոտ է, ու այդ մանդատը ներկա չի գտնվել նիստին: Յուրաքանչյուրի մասով առանձին դիրքորոշում կա, տարբեր մարդիկ են: Օրինակ՝ նախկին քաղաքապետ կա, որը հասարակությանը բաժանեց սեւերի ու սպիտակների, մսխեց Երեւանի բյուջեն, ես էլ փաստ ունեմ մոտս՝ շինթույլտվության եւ ավարտական ակտի համար կաշառք տալու վերաբերյալ, եթերներումս բազմիցս խոսել եմ այս մասին, բայց գործ այդպես էլ չի հարուցվել:

-Պարոն Ուրիխանյան, Դուք ի՞նչ եք պատրաստվում անել. թեեւ մանդատը վայր դնելու դիմում եք ներկայացրել, բայց դիմումը չի ընդունվել, Դուք հանդիսանում եք այս պահին ավագանու անդամ:

-Իմ բոլոր քաղաքական գործողությունները նպատակ են ունեցել այս իշխանություններին Հայաստանի կառավարումից դուրս շպրտել, հետեւաբար ցանկացած գործողություն, այդ թվում՝ քաղաքի մասշտաբով, կառավարչական կամ այլ, ծառայելու են այդ նպատակին: Ես նպատակ չեմ ունեցել ավագանու ընտրությունների արդյունքում մասնակցել Երեւանի կառավարմանը, հենց սրանով էլ պայմանավորված է եղել, որ դեռ սեպտեմբերին ես ինքնաբացարկի եւ մանդատից հրաժարելու դիմում եմ ուղարկել, որը նաեւ պաշտոնապես հրապարակվել է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԸՆԴՈՒՆԵԼ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Հայաստանում Հունաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Խրիստոս Սոֆիանապուլսին, որը նոր է ստանձնել դիվանագիտական առաքելությունը մեր երկրում. հայտնում են վարչապետի մամուլի ծառայությունից:

Վարչապետը շնորհավորել է դեսպանին եւ մաղթել արդյունավետ աշխատանք՝ ի նպաստ Հայաստան-Հունաստան բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման ու ամրապնդման: Նիկոլ Փաշինյանը կարեւորել է փոխգործակցության շարունակական զարգացումը բոլոր ոլորտներում, այդ թվում՝ առեւտրատնտեսական կապերի ընդլայնման, համատեղ նոր ծրագրերի իրականացման առումով: Նշելով, որ Հունաստանի հետ Հայաստանն ունի հագեցած օրակարգ՝ դրա իրացման համատեքստում վարչապետը կարեւորել է կառավարությունների միջեւ ակտիվ եւ ինտենսիվ համագործակցությունը:

Զրուցակիցները քննարկել են առաջիկայում բարձր մակարդակի փոխայցելությունների կազմակերպմանը, Հայաստան-Հունաստան բազմաոլորտ համագործակցության օրակարգին, Հայաստան-Եվրոպական միություն համագործակցությանը, մեր երկրում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումներին, Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացներին վերաբերող հարցեր: Մտքեր են փոխանակվել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաների շուրջ:

ԱՆՀԻՄՆ Է ՈՐԱԿԵԼ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունն արձագանքել է Բրյուսելում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ Եվրոպական միության դիվանագիտության ղեկավար Ժոզեպ Բորելի հանդիպանը եւ վերջինիս հայտարարությանն այն մասին, որ սահմանին ադրբեջանական կողմի գործողությունները եղել են ոչ համաչափ: Գերատեսչությունը Բորելի խոսքը անհիմն է որակել: Ադրբեջանի ԱԳՆ-ն ԵՄ դիվանագիտության ղեկավարին մեղադրել է հայամետ դիրքորոշման համար:

Բաքուն անդրադարձել է նաեւ Բորելի դիտարկմանը, որ սահմանային վերջին լարվածությունն ապացուցում է զինված ուժերի հետքաշման անհրաժեշտությունը: Ըստ ադրբեջանական կողմի՝ այդ առաջարկը «գործնական նշանակություն չունի»:

Ադրբեջանական կողմը նաեւ պահանջել է Լեռնային Ղարաբաղից հայերին «բռնի տեղահանվածներ» չանվանել:

«Ափսոսանք է առաջացնում այն, որ չնայած Եվրոպական խորհրդի ղեկավար Շառլ Միշելի խաղաղասիրական նախաձեռնություններին՝ արտաքին հարաբերությունների գերագույն ներկայացուցիչը միակողմանի հայամետ դիրքորոշում է որդեգրել եւ այդպիսով անջրպետ է ստեղծում Ադրբեջանի եւ ԵՄ ինստիտուտների միջեւ, ինչպես նաեւ մեկուսացնում է իրեն Ադրբեջան-Հայաստան կարգավորման գործընթացից»,- ասված է Ադրբեջանի ԱԳՆ հաղորդագրության մեջ:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

Բրյուսել այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի՝ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինա Պիրիսի հետ:

«Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են տարածաշրջանային վերջին զարգացումները եւ իրավիճակի ապակայունացմանն ուղղված փորձերը: Արարատ Միրզոյանը վերահաստատել է առկա մարտահրավերների հաղթահարման հարցում Հայաստանի տեսլականն ու մոտեցումները՝ հիմնված հանրահայտ սկզբունքների վրա»,- հայտնում են Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարությունից:

Անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստան-ՆԱՏՕ գործընկերության հետագա ամրապնդմանն ուղղված ջանքերին:

ՀԱՆՁՆԱՌՈՒ Է

ԱՄՆ-ն մտահոգված է հայ-ադրբեջանական սահմանին փետրվարի 13-ին տեղի ունեցած բախումների առնչությամբ եւ կարծում է, որ ուժի կիրառումը խաթարում է բանակցությունները:

Այս մասին հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը:

«Մեզ մտահոգում են մահացու ելքով ռազմական բախումների մասին հաղորդումները, որոնք հանգեցրել են մի քանի զոհերի: Մենք մեր խորին ցավակցությունն ենք հայտնում զոհվածների եւ վիրավորների ընտանիքներին: Ուժի կիրառումը խաթարում է բանակցությունները: Կայուն խաղաղության միակ ճանապարհը բանակցությունների սեղանի շուրջ է: Հրադադարի ցանկացած խախտում պետք է հետաքննվի եւ պատշաճ հասցեագրվի», - ասել է Միլլերը ճեպազրույցի ընթացքում:

Նա եւս մեկ անգամ կրկնել է, որ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հանձնառու է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության բանակցություններին: Ինչ վերաբերում է փետրվարի 16-ին կայանալիք Մյունխենի անվտանգության համաժողովի ընթացքում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հետ Բլինքենի հնարավոր հանդիպմանը, Միլլերը նշել է, որ պետքարտուղարի օրակարգի մասին լրացուցիչ կտեղեկացվի:

Չնայած Հարավային Կովկասում խաղաղության հասնելու հայկական կողմի ու միջազգային դերակատարների ջանքերին՝ ադրբեջանական կողմը հերթական ագրեսիան է ձեռնարկել Հայաստանի նկատմամբ: Փետրվարի 13-ին՝ ժամը 05:30-ից սկսած, ադրբեջանական զինված ուժերը հրաձգային զենքերից կրակ են բացել Սյունիքի մարզի Ներքին Հանդ բնակավայրում հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետեւանքով հայկական կողմն ունի 4 զոհ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ՞Ն

Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահ զորակազմի գործունեությունը շարունակելու համար նախապատրաստական աշխատանքներ են ընթանում ռուս-ադրբեջանական հերթական շփման ուղղությամբ:

Այս մասին փետրվարի 14-ին ասել է Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Քննարկվող հարցերի թվում Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության վերադարձի հեռանկարն է, նրանց իրավունքների եւ անվտանգության ապահովումը՝ համատեղ պարեկության իրականացմամբ, մշակութային հուշարձանների, կրոնական ժառանգության պահպանմամբ»,- նշել է Զախարովան եւ հավելել՝ այդ շփումները ձեւավորված են կառուցողական հիմքի վրա եւ կրում են պարբերական բնույթ:

ԱՋԴՈՒՄ ԵՆ ԴՐՄԻՑ

ՀԱՊԿ-ը համարում է, որ հայ-ադրբեջանական սահմանին հակամարտության սրման հավանականությունը մեծ է, եւ իրավիճակը կարգավորելու համար անհրաժեշտ է խաղաղության պայմանագիր:

Այս մասին ճեպազրույցում հայտարարել է ՀԱՊԿ միացյալ շտաբի պետ, գեներալ-գնդապետ Անդրեյ Սերդյուկովը:

«Առանձին պետությունների կողմից Հարավային Կովկասում սեփական դիրքերն ամրապնդելու, Կասպից ծովի ռեսուրսներին հասանելիություն ստանալու եւ դեպի Կենտրոնական Ասիա ուղիղ ելք ապահովելու փորձեր են արձանագրվում: Դրա համար, ի թիվս այլ բաների, ակտիվորեն օգտագործվում է հայ-ադրբեջանական սահմանին հակամարտության մեծ հավանականությունը: Իրավիճակի հետագա կարգավորման գործում կարեւոր է մնալու հաշտության համաձայնագրի կնքումը», - Սերդյուկովի խոսքերն է մեջբերում ՏԱՍՍ-ը:

ՀԱՊԿ միացյալ շտաբի պետն Արեւմուտքին մեղադրել է Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի վրա ազդելու փորձերի համար՝ չնայած Հայաստանի անդամակցությանը ՀԱՊԿ-ին:

«Չնայած Հայաստանի անդամակցությանը կազմակերպությանը՝ դրսից շարունակվում են փորձերը՝ ազդելու հետկոնֆլիկտային կարգավորման ձեւաչափի վրա», - նշել է ՀԱՊԿ պաշտոնյան:

Չնայած Հարավային Կովկասում խաղաղության հասնելու հայկական կողմի ու միջազգային դերակատարների ջանքերին՝ ադրբեջանական կողմը հերթական ագրեսիան է ձեռնարկել Հայաստանի նկատմամբ: Փետրվարի 13-ին՝ ժամը 05:30-ից սկսած, ադրբեջանական զինված ուժերը հրաձգային զենքերից կրակ են բացել Սյունիքի մարզի Ներքին Հանդ բնակավայրում հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետեւանքով հայկական կողմն ունի 4 զոհ:

ՀՀ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

ԿԱՐԵՎՈՐ՝ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ

Նախագահ Վահագն Խաչատուրյանի պաշտոնական այցը Հունգարիա շատ կարեւոր էր հայ համայնքի համար:



Այս մասին ասաց Հունգարիայի խորհրդարանի հայ փոքրամասնության ներկայացուցիչ Նիկողոս Հակոբյանը՝ ամփոփելով նախագահի այցը Բուդապեշտ:

«Նախագահի այցը շատ կարեւոր էր Հունգարիայի հայ համայնքի համար, քանի որ երկար տարիներ չկային դիվանագիտական հարաբերություններ: Հույս ունենք, որ նախագահի այցը հետագայում խթան կհանդիսանա աշխուժացնելու երկու երկրների միջեւ կապերը թե՛ մշակույթի, թե՛ գիտության, թե՛ առեւտրի ոլորտներում: Բոլորիս համար մեծ պարծանք էր նախագահի այցը. վերջապես Հունգարիայում ապրող հայերը հասկացան, որ շարժվեց մի սառույց, որ 12 տարի կանգնած էր: Հուսով ենք, որ այդ այցը սկիզբն է մեր բարեկամական կապերի զարգացման առումով»,- ընդգծեց Հակոբյանը:

Այս համատեքստում Հունգարիայի խորհրդարանի պատգամավորը կարեւորեց հայ համայնքի աշխատանքը:

«Ինչպես Հայաստանի նախագահը նշեց, Հայաստանը պետք է բոլոր պետությունների հետ ունենա լավ հարաբերություններ: Չմոռանանք, որ հուլիսից Հունգարիան է ստանձնելու ԵՄ նախագահությունը, եւ դա շատ կարեւոր նշանակություն ունի մեզ համար: Որպես հայ համայնք՝ մենք էլ այստեղ շատ աշխատանք ունենք իրականացնելու»,- ասաց Հակոբյանը:

Հարցին, թե Հայաստանը ինչ ուղղությամբ պետք է աշխատի Հունգարիայի հետ հարաբերությունները զարգացնելու համար, Հակոբյանը պատասխանեց. «Գաղտնիք չէ՝ Հունգարիան շատ լավ հարաբերություններ ունի Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ: Մենք պետք է շատ նրբորեն կարողանանք հետ բերել կորցրած բալանսը: Դա շատ կարեւոր է մեզ համար: Տարիներ շարունակ Հունգարիան շատ ճկուն քաղաքականություն է վարում. ինչպես Հայաստանն է կարեւոր Հունգարիայի համար մշակութային, կրոնական առումով, այնպես էլ Թուրքիան ու Ադրբեջանը՝ բիզնեսի եւ առեւտրի առումով: Այդ իսկ պատճառով մենք պետք է լինենք զգոն ու աշխույժ»,- շեշտեց Նիկողոս Հակոբյանը:

Պատգամավորի խոսքով՝ Հունգարիան շատ վաղուց էր պատրաստակամ հայ-հունգարական հարաբերությունները վերականգնելու հարցում:

«Շատ անգամ հունգարական կողմը հայ համայնքին էր խնդրում, որպեսզի մենք լինենք հարաբերությունների վերականգնման կամուրջը եւ կարողանանք այդ հարաբերությունները շտկել: Հունգարիան միշտ դիմել է հայ համայնքին, որպեսզի դիվանագիտական կապերը նորից վերականգնվեն, եւ երկու պետությունների միջեւ լինի առեւտուր եւ շարժ: Ինչպես Հայաստանի նախագահն ասաց, քաղաքականության մեջ պետք է լինել պրագմատիկ եւ ճկուն»,- եզրափակեց Հակոբյանը:

Հայաստանի եւ Հունգարիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունները, որոնք հաստատվել էին 1992թ. փետրվարի 26-ին, կասեցվել էին 2012թ. օգոստոսի 31-ին Հունգարիայի կողմից ադրբեջանցի ոճրագործ Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանին արտահանձնելուց հետո: 2022թ. դեկտեմբերի 1-ին Լոնդոնում ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում տեղի էր ունեցել Հայաստանի եւ Հունգարիայի ԱԳ նախարարներ Արարատ Միրզոյանի եւ Պետեր Սիյարտոյի հանդիպումը, որի ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերել վերականգնել լիարժեք դիվանագիտական հարաբերությունները: 2023թ. կայացել է Սիյարտոյի այցը Հայաստան: Փետրվարի 5-7-ը պաշտոնական այցով Հունգարիայում էր ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

«ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՍԵՐՄԵՐ ԵՆ ԴՆՈՒՄ»

«Ադրբեջանի ռազմական գործողությունը սահմանին Հայաստանի վրա ճնշում գործադրելու փորձ է»,-ասել է Պետդումայի ԱՊՀ հարցերով կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զատուլինը: Lenta.ru-ի հետ զրույցում նա արձագանքել է երկու երկրների միջեւ տեղի ունեցած վերջին սրացմանը, խոսել նաեւ խաղաղության պայմանագրի ստորագրման հեռանկարների մասին:

Պատգամավորի խոսքով՝ առճակատման նոր դրվագը հերթական անգամ մեծացնում է լարվածությունը ավանդաբար թշնամական համարվող երկրների հարաբերություններում:

«Ինձ համար դժվար է դատել, թե ով է ճիշտ, ով է սխալ այն տեսանկյունից, թե ով է առաջինը սկսել, ինչպես ասում են բակում ծեծկռտուքից առաջ, բայց ով էլ առաջինը սկսած լինի, ակնհայտ է, որ Ադրբեջանը դա օգտագործել է որպես ուժի եւ վրեժի դրսեւորման պատրվակ եւ այսօր այս տեղեկությունը տարածում է որպես հերթական հաղթանակ Հայաստանի հետ դիմակայությունում: Իհարկե, այս հռետորաբանությունը ակնհայտորեն պայմանավորվածություն ձեռք բերելու նպատակ չունի, ամենայն հավանականությամբ ճնշում գործադրելու փորձ է»,- ասել է Զատուլինը:

Ադրբեջանը շահագրգռված է, որ Հայաստանը ինչքան հնարավոր է շատ զիջի ցանկացած համաձայնագիր ստորագրելիս. կարծում է խորհրդարանականը: Նա հավելել է, որ Բաքուն դադար է վերցրել նախագահական ընտրություններ անցկացնելու համար, որի ժամանակ Ադրբեջանի առաջնորդ Իլհամ Ալիեւը կրակի վրա յուղ է լցրել՝ քվեարկելով Ստեփանակերտում, որը տեղացիներն անվանում են Խանքենդի, եւ որտեղ հայ բնակչություն չկա:

«Ես Ադրբեջանի ընտրությունների դեմ ոչինչ չունեմ, սա իրենց ներքին խնդիրն է, բայց այս ընտրությունները շատ խմորված էին հաղթողի սինդրոմով, ինչը հաստատվեց Ալիեւի քվեարկությամբ Ստեփանակերտում: Սա, կարծում եմ, արտացոլումն է այն բանի, որ, ըստ ամենայնի, այս պահին չկա խաղաղության պայմանագրի ստորագրման, տարածքային ամբողջականության ճանաչման եւ այլնի մթնոլորտ եւ կոնկրետ պայմաններ:

Դրա շուրջ հակասությունները շարունակվում են, եւ տրամաբանական հարց, որը ծագում է ոչ միայն Հայաստանում, այլ ամբողջ աշխարհում, այն է, որ Փաշինյանի կառավարությունը, որը ճանաչեց Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս, հրաժարվեց իր հայրենակիցների բոլոր աջակցությունից, կուլ տվեց զանգվածային արտագաղթը Ղարաբաղից եւ, բացի այդ, սրեց հարաբերությունները Ռուսաստանի հետ, ի՞նչ շահեց նա այդ ճանապարհին, եթե չկա նոր հրաշալի աշխարհ, բայց կան այնպիսի բախումներ, ինչպիսին երեկ եւ այսօր է: Ըստ երեւույթին, մենք շատ հեռու ենք Անդրկովկասում իրական խաղաղությունից»,- ասել է նա:

Միակողմանի հաղթանակները, ինչպես Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից Ղարաբաղի շուրջ ձեռք բերված հաղթանակները, չեն հանգեցնում անհապաղ խաղաղության, այլ նոր հակամարտությունների եւ առճակատման դրվագների սերմեր են դնում. եզրափակել է պատգամավորը:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՈՉ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ՏՎՅԱԼՆԵՐ

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել են «Հրազդան մարզահամալիր» ՊՓԲ ընկերության գույքի մասնավորեցման գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը: Այս մասին տեղեկացնում են ՀՀ գլխավոր դատախազությունից:

«Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2001 թվականին կնքված վարձակալության պայմանագրով 100 տոկոս պետական բաժնեմասով «Հրազդան մարզահամալիր» ՊՓԲ ընկերության ամբողջ գույքը, շենքերը, շինությունները եւ տարածքը, այն է՝ ք. Երեւան, Հրազդանի կիրճ 4 հասցեում գտնվող Հրազդան մարզադաշտը՝ շուրջ 62 հազար քմ մակերեսով շինությունները եւ 14 հա հողամասը, վարձակալության են հանձնվել «Հրազդան մարզահամալիր վարձակալական ձեռնարկություն» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն):

Վարձակալության տրված գույքի մի մասը՝ 10,4443 հա մակերեսով հողամասը եւ 61,660,3 քմ մակերեսով շինությունները (մարզահամալիրը, «Հրազդան» մարզադաշտը), Կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1333-Ն որոշմամբ՝ ուղղակի վաճառքի ձեւով օտարվել են վարձակալին՝ «Հրազդան մարզահամալիր վարձակալական ձեռնարկություն» ՓԲ ընկերությանը: Գույքի վաճառքի գին է սահմանվել 87 մլն 520 հազար դրամը (ուսումնասիրության նյութերում առկա չէ նման գնի վերաբերյալ որեւէ հիմնավորում, հաշվի չի առնվել ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ գույքի գնահատումն իրականացնել համապատասխան որակավորման անկախ գնահատողի կողմից առավել իրատեսական գին սահմանելու նպատակով):

Կառավարության որոշման համար հիմք են հանդիսացել Պետական գույքի կառավարման վարչության կողմից ներկայացված տվյալները, ըստ որոնց՝ 2001 թվականին կնքված վարձակալության պայմանագրի շրջանակներում արդեն իսկ կատարվել է ավելի քան 900 հազար ԱՄՆ դոլարի ներդրում: Մինչդեռ, Գլխավոր դատախազության ուսումնասիրության շրջանակում Պետական գույքի կառավարման կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Ընկերության կողմից 2001-2004 թվականների ընթացքում 900 հազար ԱՄՆ դոլար ներդրում կատարելու վերաբերյալ տվյալներ առկա չեն, դրանց վերաբերյալ տեղեկություն առկա չէ «Հրազդան» մարզահամալիր» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվեկշռում, առկա չէ նաեւ վարձակալի կողմից վարձատուին ներկայացված՝ կապիտալ ներդրում կատարելու վերաբերյալ որեւէ ակտ կամ գրավոր տեղեկություն:

2005 թվականի հունվարի 7-ին Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ՝ նույն ընկերության բաժնետեր Ա.Ա.-ն իր վրա է վերցրել 2004 թվականին կնքված պետական գույքի մասնավորեցման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունները՝ մինչեւ 2009 թվականը 2 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կատարելու մասին (ըստ Պետական գույքի կառավարման վարչության՝ Ա.Ա.-ի կողմից կատարված ներդրումները համարվել են ընդունված):

2010 թվականին Ընկերությունը վերանվանվել է «Հրազդան» կենտրոնական մարզադաշտ» ՓԲ ընկերության, որից հետագայում առանձնացվել են ««Եվրոպարկ» առեւտրի կենտրոն» ԲԲ ընկերությունն ու «ՍՈԼԻԴՈՒՍ» ՓԲ ընկերությունը:

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015 թվականի վճռով՝ «Հրազդան» կենտրոնական մարզադաշտ» ՓԲ ընկերությունը ճանաչվել է սնանկ, իսկ 2019 թվականին Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ:

Հաշվի առնելով, որ պաշտոնատար անձանց կողմից ներկայացված ոչ արժանահավատ տվյալների հիման վրա՝ Կառավարությունը տվյալ ժամանակահատվածում շուրջ 11 մլրդ 558 մլն դրամ շուկայական արժեք ունեցող, ներկայում 16 մլրդ 127 մլն 253 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեք ունեցող գույքը՝ «Հրազդան» մարզադաշտը, վաճառել է ընդամենը 87 մլն 520 հազար դրամով՝ դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

2024 թվականի փետրվարի 10-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը) եւ 445-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնեական կեղծիքը) հատկանիշներով»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆ՝ ԻՆՔՆԱՎՆԱՍՄԱՄԲ

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ տեւական ժամանակ է՝ տարբեր քրեակատարողական հիմնարկներում ստուգումներ են իրականացվում: Մեր աղբյուրները հայտնում են, որ ՔԿՀ-ներում կալանավորվածների խցերում արգելված իրեր են փնտրում եւ հավաքում:

Մեր տեղեկությունների համաձայն՝ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, երբ հերթական ստուգումներն են իրականացվել, կալանավորվածները իրենց ըմբոստությունը ցույց տալու համար սկսել են ինքնավնասումներ կատարել:

Ըստ մեր տեղեկությունների՝ մեկը սափրիչի ծայրով վնասել է արմնկային հոդը, 2-ը կուլ են տվել սափրիչի ծայրը, 3-ը կուլ են տվել երկաթի կտոր:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱՍԿԱԾԵԼԻ «BMW»-ՆԵՐԸ

Արմավիրի պարեկները փետրվարի 8-ին՝ Մերձավան գյուղում ծառայություն իրականացնելիս՝ գիշերվա ժամը 1-ին, ստուգման նպատակով կանգնեցրել են մի «ԲՄՎ»: 24-ամյա արթիկցի վարորդի ու 25-ամյա մերձավանցի ուղեւորի վարքագիծն Արմավիրի պարեկներին թվացել է կասկածելի: Թմրանյութ ապօրինի պահելու եւ օգտագործելու կասկածանքով նրանք ձերբակալվել ու, մեքենայով հանդերձ, տեղափոխվել են ոստիկանության Վաղարշապատի բաժին: Այստեղ էլ պարեկների կասկածները հաստատվել են. թեեւ անձնական խուզարկությամբ նրանց մոտ ոչինչ չի հայտնաբերվել, սակայն, ըստ ուղեւորի, մեքենայի սրահում կա կաթուցիչ եւ թղթե փաթեթ՝երկուսն էլ լցված դեղնականաչավուն զանգվածով:

Նա հավելել է, որ թմրամիջոցն իրենն է, հումքն էլ ինքն է հավաքել կանեփի վայրաճ թփերից եւ իր օգտագործելու համար պատրաստել թմրանյութ:

Մեքենան տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Վաղարշապատի քննչական բաժին:

Նույն օրը՝ Մարգարայի խճուղում ծառայելիս, Արմավիրի պարեկները կանգնեցրել են մեկ այլ «ԲՄՎ»: Ստուգման ընթացքում մեքենայի 25-ամյա երեւանցի վարորդն ու գրեթե հասակակից ուղեւորները դրսեւորել են կասկածելի վարք:

Երեկոյան ժամը 9-ի կողմերը թմրամոլության կասկածանքով երեքն էլ ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության Վաղարշապատի բաժին: Այդ ընթացքում պարեկները նկատել են, որ ուղեւորներից մեկը գցել է երեք փաթեթ: Բացի վարորդից, մյուս երկուսի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են դեղնականաչավուն զանգվածով փաթեթներ, նաեւ բյուրեղանման զանգված, իսկ հայտնաբերված երեք կաթուցիչից երկուսում կանեփանման զանգված էր: Երկուսն էլ հայտնել են, որ հայտնաբերվածն իրենցն է՝ անձնական օգտագործման համար: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում հաջորդ օրը զննություն է կատարվել Մարգարայի խճուղում: Հիշյալ «ԲՄՎ»-ից մոտ երեք մետր հեռավորության վրա հայտնաբերվել է երեք փաթեթ՝ երկուսը լցված դեղնականաչավուն, մեկը՝ բյուրեղանման զանվածով: Նշանակվել են փորձաքննություններ: Հանգամանքները պարզվում են:

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔ

ՆԳՆ-ից տեղեկացնում ենք, որ ՆԳՆ ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզները փետրվարի 6-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Սարի թաղի 56-ամյա մի բնակիչ տանը ապօրինի զենք-զինամթերք է պահում: Նախաձեռնվեց քրեական վարույթ, որի շրջանակներում փետրվարի 13-ին, դատարանի որոշմամբ, քրեական հետախույզների եւ քննիչների կողմից նշված տանը խուզարկություն կատարվեց: Հայտնաբերվեցին տարբեր տրամաչափերի 125 փամփուշտ, «ԱԿՍ 74» տիպի 5,45 մմ տրամաչափի ինքնաձիգ՝պահեստատուփով, առանց գործարանային համարի երկփողանի հրացան, ազդանշանային ատրճանակ, սվին-դանակ, «Ֆ-1» եւ «ՌԳԴ-5» տիպի նռնակ, «ՏՕՋ» տիպի հրացանի 48 փամփուշտ, ինքնաձիգի պահեստատուփ եւ ինքնաձիգի հարվածային մեխանիզմ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝փետրվարի 13-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 57 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՀՐԴԵՀ՝ ՄԱՀՎԱՆ ԵԼՔՈՎ

Փետրվարի 13-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղում գտնվող առանձնատան երկրորդ հարկից համագյուղացիները դուրս են բերել 85-ամյա Արամայիս Գեւորգյանի դիակը՝այրվածքներով: Դեպքի վայր են ժամանել Նոյեմբերյանի հրշեջ-փրկարարական ջոկատից 2 մարտական հաշվարկ, նրանց կողմից հրդեհը մարվել է: Ամբողջությամբ այրվել է Ա. Գեւորգյանի երկհարկանի առանձնատան 2-րդ հարկի ննջասենյակը՝ մոտ 20 քառակուսի մետր մակերեսով, ներսի գույքով, իսկ մոտ 60 քառակուսի մետր մակերեսով հատված ջերմահարվել է: Հրդեհի, Արամայիս Գեւորգյանի մահվան դեպքի փաստով Նոյեմբերյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, դեպքի հանգամանքները պարզվում են: Ոսկեպարցիները հայտնեցին, որ Ա. Գեւորգյանը Ոսկեպարում բնակվել է միայնակ: Նա նախկինում ապրել է Երեւանում՝ իր տղայի տանը, հետո տեղափոխվել հայրենի գյուղ, ուր մենակ է ապրել. նրա կինը մահացած է: Համագյուղացիների վկայությամբ՝ զառամյալ տարիքի պատճառով Արամայիս Գեւորգյանը բանականության հետ որոշ խնդիրներ է ունեցել: Ոսկեպարցիների ենթադրությամբ՝ հրդեհը կարող էր բռնկվել այն պատճառով, որ տարեց տղամարդը կարող էր ոտքով անզգուշությամբ շուռ տալ ջեռուցման էլեկտրական սարքը, որի հետեւանքով հրդեհ է բռնկվել: Ա. Գեւորգյանի հարեւանների վկայությամբ՝ նրա մահվան պատճառը եղել են ոչ թե այրվածքները, այլ հրդեհի հետեւանքով առաջացած շմոլ գազը: Տավուշի բնակավայրերում, հատկապես՝գյուղերում միայնակ ապրող տարեցներ շատ կան, որոնց չափահաս զավակները բնակվում են արտերկրում կամ Հայաստանի այլ վայրերում: Պարբերաբար լինում են դեպքեր, երբ միայնակ մարդիկ զառամյալ տարիքի, խաթարված առողջության հետեւանքով անզգուշությամբ հրդեհ են առաջացնում, իրենք դրա զոհ դառնում:

ԳՈՒՄԱՐ ՉԻ ՀԱՏԿԱՑՎՈՒՄ

Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ մարզի հանրակրթական 76 դպրոցների շենքերից 10-ն ունի հիմնանորոգման, 32-ը՝վերանորոգման (դասասենյակներ, միջանցքներ, մարզադահլիճներ) կարիք: Մարզպետարանից ստացված տեղեկությունների համաձայն՝ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության 21 բուժհիմնարկներից (ինչպես նաեւ նրանց կազմում գործող 39 բուժամանկաբարձական կետերից) վերանորոգման, հիմնանորոգման եւ նորի կառուցման կարիք ունեն 13 առողջապահական հիմնարկությունների շենքեր: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների եւ բուժհիմնարկների շենքերը նորոգելու համար պետական բյուջեում գումարներ չկան, իսկ կառավարության գործառնույթները կրկնող Տավուշի մարզպետարանի պաշտոնյաներին պետական բյուջեից պարգեւատրելու համար գումարները հերիքում են: 2023 թվականին Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները պետբյուջեից պարգեւատրվել են ավելի քան 71 միլիոն դրամի չափով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՐԴԵՀԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով հրդեհային եւ տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 252 նշանակալի սուբյեկտներին պատկանող 294 արտադրական նշանակության օբյեկտներում, բենզա-գազալցակայաններում, առեւտրի եւ հասարակական սննդի, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող օբյեկտներում, գիտական եւ ուսումնական հաստատություններում, հյուրանոցներում, մինչեւ 800 նստատեղով մշակութային հիմնարկներում, ընդհանուր, գյուղատնտեսական նշանակության եւ նավթամթերքի պահեստներում, հիվանդանոցներում, տրանսպորտային եւ կառավարման հիմնարկներում:

Տեսչական մարմնից հայտնում են, որ ստուգումների գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 68 օբյեկտ չի ստուգվել՝ փաստացի չգործելու (այդ թվում՝ ժամանակավոր դադարեցման), առցանց գործելու, հաշվառումից հանված կամ սնանկ լինելու հիմնավորմամբ:

Ոչ պլանային 8 ստուգում իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա:

16 հանձնարագրի կատարում ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 218 վերստուգում:

2023 թվականի ընթացքում կատարած ստուգումներ/վերստուգումներն ըստ մարզերի բաշխված են հետեւյալ կերպ. Շիրակ՝ 21 ստուգում, 16 վերստուգում, Լոռի՝ 17/25, Գեղարքունիք՝ 25/4, Կոտայք՝ 16/54, Արագածոտն՝ 11/14, Սյունիք՝ 8/7, Տավուշ՝ 16/21, Արարատ՝ 13/6, Վայոց ձոր՝ 5/11, Արմավիր՝ 25/45:

Մայրաքաղաք Երեւանում արվել են 64 ստուգում եւ 15 վերստուգում:

2023թ? ստուգումների արդյունքում արձանագրվել է 1895 խախտում, որից 1020-ը՝ Երեւանում, մնացած 875-ը՝ մարզերում: Մարզային պատկերը հետեւյալն է՝ Գեղարքունիք՝238, Արմավիր՝153, Սյունիք՝ 45, Լոռի՝ 115, Կոտայք՝ 91, Տավուշ՝ 85, Շիրակ՝ 80, Արարատ՝ 35, Արագածոտն՝ 17, Վայոց ձոր՝16 խախտում:

Ընդհանուր նշանակության 48 պահեստներում եւ բազաներում բացահայտվել է 528 խախտում: Ստուգումներից 3-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա:

Նշված ժամանակահատվածում ստուգվել է 200 մ2 եւ ավելի մակերեսով առեւտրի եւ հասարակական սննդի 46 օբյեկտ, արձանագրվել է 257 խախտում:

Մինչեւ 200 մ2 մակերեսով առեւտրի եւ հասարակական սննդի 14 օբյեկտում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է 33 խախտում:

200 մ2 եւ ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 87 օբյեկտներում արձանագրվել է 552 խախտում: Ստուգումներից 3-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա:

Մինչեւ 200 մ2 մակերեսով արտադրական կազմակերպությունների 41 օբյեկտներում արձանագրվել է 117 խախտում: 9 բենզալցակայանի ստուգումների արդյունքում արձանագրվել է 37 խախտում:

Կառավարման 24 հիմնարկում արձանագրվել է 140 խախտում: Ստուգումներից 3-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա:

2023 թվականին ստուգվել է 14 գազալցակայան, արձանագրվել՝ 111 խախտում:

Գիտական եւ ուսումնական 3 հաստատություններում արձանագրվել է 21 խախտում:

6 հյուրանոցների եւ հանրակացարանների ստուգումների արդյունքում արձանագրվել է 27 խախտում:

Նավթամթերքների 3 պահեստում արձանագրվել է 18 խախտում:

2023թ. իրականացված ստուգումների արդյունքում կազմվել եւ տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները եւ դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 164 կարգադրագիր:

Ստուգումների եւ վերստուգումների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 133 սուբյեկտի 137 օբյեկտ:

ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ. հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հրդեհատեխնիկական 799 հետազոտություն, արձանագրվել՝3130 խախտում:

74 բենզալցակայանի հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում արձանագրվել է 336 խախտում:

Նշված ժամանակահատվածում վերահսկողական գործառույթ է իրականացվել 54 գազալցավորման կայանում, արձանագրվել է 320 խախտում:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական 11 հիմնարկի հակահրդեհային վիճակի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է 167 թերություն, որոնց վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարին:

Երեւանի Կենտրոն վարչական շրջանի հասարակական սննդի 109 օբյեկտներում արձանագրվել է 446 խախտում:

Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել եւ տրամադրվել է 1174 եզրակացություն՝ նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանության վերաբերյալ:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 932 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին: Տրվել է 735 դրական եւ 197 բացասական եզրակացություն:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են հրդեհի ազդանշանի ինքնաշխատ 11 համակարգի փորձարկման աշխատանքներին: ՔՏՀԱՏՄ կողմից հաշվառվել եւ վերլուծվել է 2023 թվականի ընթացքում ՀՀ-ում արձանագրված 5248 հրդեհի դեպք, որից 19-ը՝մահվան ելքով:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄ

ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ԵՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Երեւանում ավելի քան 4-ժամյա, իսկ հանրապետության այլ տարածքներում 8 ժամից ավելի տեւողությամբ որեւէ հոսանքազրկման դեպքում, բացառությամբ ֆորսմաժորային դեպքերի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն բաժանորդներին տուգանքներ է վճարում:

Այս մասին փետրվարի 14-ին կայացած ասուլիսին ասաց ընկերության գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանը:

«Դրա համար կարիք չկա դիմելու ընկերությանը: Մենք ավտոմատ դա հաշվեգրում ենք յուրաքանչյուր բաժանորդի քարտին՝ յուրաքանչյուր դեպքի համար մինչեւ 2500 դրամ որպես էլեկտրաէներգիայի դիմաց վճարում: Այսինքն՝ բաժանորդն այդքանով պակաս է վճարում էլեկտրաէներգիայի դիմաց»,-մանրամասնեց Հարությունյանը՝ հավելելով, որ անցած տարիների ընթացքում ՀԷՑ-ը շուրջ 600 միլիոն դրամի չափով այդպիսի տուգանքներ է վճարել բաժանորդներին:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 1 մարդ զոհվել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՋԵՐՄՈՒԿԸ»՝ ՎՏԱՆԳԱՎՈ՞Ր

Հայաստանի սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինն անդրադարձել է Ռուսաստանում հայկական «Ջերմուկ» հանքային ջրի առանձին խմբաքանակների վաճառքը դադարեցնելու որոշմանը:

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը հայտարարություն է տարածել, որը ներկայացնում ենք ստորեւ.

«ՌԴ սպառողների իրավունքների պաշտպանության դաշնային ծառայությունը («Роспотребнадзор») հայտարարել է Ռուսաստանում «Ջերմուկ» հանքային ջրի առանձին խմբաքանակների վաճառքը դադարեցնելու մասին, ինչի պատճառը, ըստ հայտարարության, Վլադիկավկազի բնակչի կերակրափողի այրվածքի մասին տեղեկությունն է: Ըստ տեղեկության՝ ավելի վաղ նա այրվածք էր ստացել հանքային ջրի 22ի պարունակությունը խմելու հետեւանքով:

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը ՌԴ-ից որեւէ պաշտոնական տեղեկատվություն առ այսօր չի ստացել, այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ «Ջերմուկ» հանքային ջուրը Ռուսաստան է արտահանվում 2001 թվականից՝ աստիճանաբար ավելացնելով ծավալները, 350.000 լիտրից հասցնելով մինչեւ 15.273.000 լիտր տարեկան, իսկ յուրաքանչյուր ներմուծված խմբաքանակ համապատասխանում է Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին:

Բացի Ռուսաստանից, այն արտահանվում է նաեւ ԱՄՆ, Ուկրաինա, Վրաստան, Բելառուս, Ղազախստան, ԵՄ եւ բազմաթիվ այլ երկրներ:

23 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունից արտահանված հանքային ջրից թունավորման թեկուզ եւ մեկ դեպք չի արձանագրվել, ուստի խիստ տարօրինակ է արտադրության ընթացքի մեջ որեւէ բացասական տեղաշարժ չլինելու պայմաններում «Ջերմուկ» հանքային ջրի առանձին խմբաքանակների վաճառքը դադարեցնելու մասին հնչեցված որոշումը:

«Ջերմուկ» հանքային ջրի արտադրության մեջ քացախ չի օգտագործվում, իսկ օգտագործվող նյութերը համապատասխանում են միջազգային ստանդարտներով սահմանված պահանջներին եւ նախատեսված են սննդի արդյունաբերության մեջ օգտագործելու համար: Նշված նյութերի ենթադրյալ մնացորդային պարունակությունը, ըստ դրանց տեխնիկական բնութագրերի, չի կարող առաջացնել կերակրափողի այրվածք:

Հանքային ջրի արտադրական գործընթացն ամբողջությամբ ավտոմատացված փակ շրջափուլ է, եւ 22ի մեջ քացախի առկայությունն ուղղակի հակասում է ավտոմատացված արտադրական գործընթացի սկզբունքին եւ կազմակերպմանը: Պատրաստի արտադրանքի նվազագույն քանակը 1200 շիշ է, ուստի վերը նշված չափանիշների անհամապատասխանությունն առնվազն այդքան շշում պետք է դրսեւորվեր:

Անհրաժեշտության դեպքում ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը կձեռնարկի վերահսկողական համապատասխան միջոցառումներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտադրված յուրաքանչյուր խմբաքանակի նմուշները պահվում են, իսկ Ռուսաստանի գործընկերների հետ նաեւ կձեռնարկվեն գործուն միջոցներ՝ պարզելու համար նման որոշման կայացման հիմքերը»:

ՀԷՑ

ԿԱՐԵԼԻ Է ԽՆԱՅԵԼ ՄՈՏ 20 ՄԼՐԴ ԴՐԱՄ

«Ներդրումների ընդհանուր ծավալը նախատեսում ենք մինչեւ 2030 թվականը հասցնել 461 միլիարդ դրամի՝ ավելի քան 500 միլիոն դոլարի»,- փետրվարի 14-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ, ասաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ ֆինանսատնտեսական գծով տնօրեն Արմեն Արշակյանը:

Նա պարզաբանեց, որ մատակարարվող էլեկտրաէներգիայի որակի բարելավման նպատակով ներդրումների ընդհանուր ծավալը կավելացվի մինչեւ 160 մլրդ դրամով, իսկ նոր բաժանորդների միացման եւ ցանցի հնարավորությունների ընդլայնման համար՝ մինչեւ 171 մլրդ դրամով:

Արշակյանը հավելեց, որ միջոցներ կներդրվեն նաեւ տեխնիկական եւ առեւտրային կորուստների մակարդակը նվազեցնելու համար:

Համեմատության համար ընկերության ներկայացուցիչը բերեց 2002-2015 թվականների թվերը, երբ ներդրումների տարեկան ծավալը միջինը կազմում էր 5-16 մլրդ դրամ, որոնք ուղղված էին ոչ թե համակարգի զարգացմանը, այլ պահպանմանը:

«Բայց 2016-2023 թվականներին ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 235 մլրդ դրամ՝ տարեկան միջինը 35 մլրդ դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի: Եթե 2002-2003 թվականներին տեխնիկական եւ առեւտրային կորուստների մակարդակը կազմում էր 21%, ապա այժմ այդ ցուցանիշը կազմում է 6,6%: Էլեկտրաէներգիայի կորուստների կրճատման արդյունքում համակարգի համար տարեկան հնարավոր է խնայել 14 մլրդ դրամ, ընկերության օպտիմալացման արդյունքում՝ 3,6 մլրդ, գործառնական ծախսերի կրճատմամբ՝ 2,7 մլրդ դրամ»,- նշեց նա:

Արշակյանի խոսքով՝ ընդհանուր առմամբ, տարեկան կարելի է խնայել մոտ 20 մլրդ դրամ, ինչը հնարավորություն է տալիս մեղմել սպառողների սակագնային բեռը եւ ավելի չմեծացնել այդ բեռը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանն իր հերթին խոստովանեց, որ կան խնդիրներ՝ նշելով, որ անհնար է անմիջապես վերակառուցել ամբողջ ցանցը եւ ակնթարթորեն արդյունքի հասնել:

Նա ընդգծեց, որ ներդրումներին զուգահեռ պետք է լինեն բարելավումներ, իսկ կտրուկ փոփոխությունների հասնելու համար միանվագ ներդրումներով խնդիրը լուծելը կհանգեցնի սոցիալական խնդիրների կտրուկ աճի:

«Մեր ներդրումները նպատակային են: Ընկերությունն ամեն ինչ անելու է մատակարարվող էլեկտրաէներգիայի որակն ու արդյունավետությունը բարելավելու համար: 2016 թվականից սկսած՝ ներդրումների ծավալը տարեկան միջինը հինգ անգամ աճել է. սա աննախադեպ ցուցանիշ է էներգետիկ համակարգի համար:

Ներդրումները կատարվում են ոչ միայն ներգրավված միջոցների հաշվին, այլեւ ընկերության շահույթի հաշվին: 2016 թվականից մեր ընկերության հետ սկսեցին աշխատել միջազգային ֆինանսական կազմակերպությունները, որոնք հնարավորություն տվեցին վարկային միջոցներ ներգրավել շուկայականից շատ ավելի ցածր գնով: Այս բոլոր միջոցները հավաքագրվել են առանց պետական երաշխիքների, այսինքն՝ լրացուցիչ բեռ են ստեղծել պետական բյուջեի վրա»,- ասաց Հարությունյանը:

Նա հիշեցրեց, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն դեկտեմբերին թողարկել է 32 մլրդ դրամի պարտատոմսեր, որոնք բաշխվել են սպասվածից ավելի արագ: «Սա դարձավ դրամային արտահայտությամբ պարտատոմսերի ամենամեծ թողարկումը երկրում: Դրամական արտահայտությամբ պարտատոմսերի 36,1%-ը ձեռք է բերվել բանկերի, 53%-ը՝ կենսաթոշակային հիմնադրամների, 10,8%-ը՝ մանրածախ ներդրողների կողմից: Ընդհանուր առմամբ, ներդրողների թիվը 311 է, որից միայն 14-ն են բանկեր եւ ինստիտուցիոնալ ներդրողներ, 297-ը՝ ֆիզիկական եւ այլ իրավաբանական անձինք: Պարտատոմսերը հասանելի կլինեն բորսայում, եւ բոլորը կկարողանան դրանք ձեռք բերել երկրորդային շուկայում»,- ընդգծեց ընկերության ղեկավարը:

Նա վստահեցրեց, որ ընկերության ֆինանսական կայունությունը գտնվում է շատ բարձր մակարդակի վրա՝ վկայակոչելով Moody's գործակալության ցուցանիշները, որը ՓԲԸ-ին շնորհել է B2 վարկանիշ՝ ամենաբարձրը Հայաստանում: «Մարզում նույն վարկանիշով 2-3 ընկերություն կա»,- եզրափակեց Կարեն Հարությունյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՐԳ

ԿՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՎԵՆ ՏԵՐԵՐԻ ՀԵՏ

Ընտանի կենդանիների գլխաքանակը կանոնակարգելու եւ վերահսկելու նպատակով առաջիկայում կենդանիները պարտադիր կհաշվառվեն եւ կնույնականացվեն իրենց տերերի հետ:

Այս մասին հայտնեց Երեւանի քաղաքապետարանի «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Հարություն Առաքելյանը՝ ընդգծելով, որ չնայած այս մասով այժմ Երեւանի ավագանու որոշում կա, բայց լծակները մի փոքր թույլ են:

«Առաջիկայում նախատեսում ենք որոշման փոփոխություն, որից հետո ընտանի կենդանիները պարտադիր պետք է հաշվառվեն կենդանիների համար նախատեսված միկրոչիպերով կամ դաջվածքներով: Դրանից հետո էլ արդեն կնույնականացնենք կենդանուն տիրոջ հետ: Արդյունքում կենդանու նկատմամբ անպատասխանատու վերաբերմունք դրսեւորելու դեպքում վարչական տույժի կենթարկվի»,- նշեց Առաքելյանը:

Նա ընդգծեց, որ կենդանիների հաշվառումը, չիպավորումն ու նույնականացումը կարեւոր ծրագիր է, որը մեծ թափով իրականացնելու են 2024 թվականին: Ըստ նրա՝ պետք է հիշել, որ թափառող կենդանիների մի զգալի մաս թափառող են դարձել հենց մարդկանց անպատասխանատու վերաբերմունքի պատճառով:

«Ըստ ընթացակարգի՝ քաղաքացիները կարող են մոտենալ իրենց վարչական շրջանների ղեկավար աշխատակազմի գրասենյակ եւ կենդանուն գրանցել հենց իրենց բնակության հասցում: Իսկ, որպես տեր, գրանցվում է այն քաղաքացին, ով կենդանուն պահելու պատասխանատվություն է վերցնում, որպեսզի հետագայում, եթե այդ կենդանին հայտնվի մեզ մոտ, նույնականացնելուց հետո հասկանանք, թե ով է տերը, եւ արդեն պատասխանատվության ենթարկենք»,- ասաց ՀՈԱԿ-ի տնօրենը:

2023 թվականի ընթացքում կենտրոնի կլինիկա է բերվել 3436 շուն, ստերջացվել եւ կատաղության դեմ պատվաստվել է 2045 շուն, իսկ կատաղության դեմ վերապատվաստվել է 753 շուն: Քնեցված եւ անկած շների թիվը 2023-ին եղել է 603, տարիքով պայմանավորված չի ստերջացվել 35 շուն, իսկ որդեգրման է հանձնվել 104 շուն: Մայրաքաղաքի փողոցներից հավաքվել է 467 անկած կենդանու դի:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՅՈՒՆԵՍԿՕ

ՄԱՄՆԱԿՑԵԼ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի (ԿԳՄՍ) նախարար Ժաննա Անդրեասյանն Աբու Դաբիում մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մշակույթի եւ արվեստի կրթության համաշխարհային համաժողովին, որի շրջանակում զեկույցով հանդես է եկել "Quality and relevant lifelong and life-wide learning in and through cultural diversity" խորագրով պանելային նիստում: Այս մասին հաղորդում է ԿԳՄՍ նախարարության մամուլի ծառայությունը:

«Զեկույցի ընթացքում նախարարը ներկայացրել է մշակութային բազմազանության համատեքստում շարունակական կրթության ապահովման անհրաժեշտությունը եւ անդրադարձել Հայաստանի փորձին: Նա նշել է, որ 2022 թվականին հաստատվել է ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, որի նպատակներից է ազգային եւ համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ եւ միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգի ձեւավորումը, որը կյանքի բոլոր փուլերում յուրաքանչյուրին հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին եւ ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն:

Նախարարը նշել է, որ ծրագրի նպատակի իրականացման համար սահմանվել են մի շարք ռազմավարական ուղղություններ, որոնցից մեկն է համընդհանուր ներառական սովորողակենտրոն եւ մասնակցային կրթական միջավայրի ստեղծումը: Սա, ըստ նախարարի, յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման եւ անձնային առանձնահատկություններից բխող եւ քաղաքացիական համագործակցությանը նպաստող որակյալ եւ արդյունավետ կրթական ծառայությունները Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Ժաննա Անդրեասյանը նաեւ նշել է, որ շարունակական կրթությունը չի կարող դիտարկվել մշակութային բազմազանության հայեցակարգից դուրս: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը վերջին տարիներին քայլեր է ձեռնարկել՝ խթանելու ժամանակակից արվեստի ոլորտի զարգացումը՝ կիրառելով մշակութային բազմազանության ապահովմանը նպատակաուղղված միջոցներ եւ համատեղելով ֆորմալ ու ոչ ֆորմալ մշակութային կրթությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մշակույթի եւ արվեստի կրթության համաշխարհային համաժողովում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն անդրադարձ է կատարել նաեւ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության էթնիկ զտումների եւ բռնի տեղահանման համատեքստում կրթության իրավունքի իրացմանը: Նա նշել է, որ նախարարությունը գործադրել եւ շարունակում է գործադրել բոլոր ջանքերը՝ ապահովելու ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչության լիարժեք ինտեգրումը կրթական գործընթացին:

Նախարարը կարեւորել է միջազգային հանրության արձագանքը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների մշակութային եւ կրթական իրավունքների պաշտպանության ապահովման հարցում եւ շնորհակալություն հայտնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստահավաք առաքելությունը Հայաստան ուղարկելու համար՝ գնահատելու Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների կրթական կարիքները:

Նշենք նաեւ՝ համաժողովի արդյունքներով ընդունվելու է «Մշակույթի եւ արվեստի կրթության շրջանակ» փաստաթուղթը, որի նպատակն է առաջարկել նոր ուղիներ՝ բարելավելու, խորացնելու եւ ընդլայնելու կրթության եւ մշակույթի ոլորտների միջեւ համագործակցությունը՝ միաժամանակ օգտագործելով թվային տեխնոլոգիաները՝ արագացնելու 2030 օրակարգով սահմանված համաշխարհային զարգացման ներկա եւ ապագա նպատակների իրագործումը: Այցի ընթացքում ԿԳՄՍ նախարարն ունեցել է նաեւ երկկողմ հանդիպումներ»,- ասվում է պաշտոնական հաղորդագրությունում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ»

ՍԱՀՄԱՆԵԼ Է ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

«Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական հոբելյանական 25-րդ փառատոնը կմեկնարկի «Էբեն» քառյակի՝ փետրվարի 20-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայանալիք բացառիկ համերգով:

Համերգի ծրագրում կհնչեն Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի Լարային քառյակ համար 21-ը, Ալֆրեդ Շնիտկեի Լարային քառյակ համար 3-ը եւ Էդվարդ Գրիգի Լարային քառյակ համար 1-ը:

Բազմաթիվ միջազգային մրցույթների թափնեկիր, «Տարվա անսամբլ» տիտղոսակիր քառյակն ավելի քան երկու տասնամյակների ընթացքում սահմանել է նոր չափանիշներ՝ հանդիսատեսի առջեւ հանդես գալով տարբեր ժանրերի կատարումներով եւ նոր մոտեցումներով:

Փարիզում «Իզայի» քառյակի եւ ապա Գաբոր Տակաչի, Էբերհարդ Ֆելցի եւ Դյորդ Կուրթագի հետ կատարողական կարողությունները զարգացնելուն հետեւում է քառյակի առաջին նշանակալի եւ նախադեպը չունեցող ձեռքբերումը՝ հաղթանակը 2004 թվականի ARD միջազգային երաժշտական մրցույթում: Սրանով քառյակը միջազգային համբավ ձեռք բերեց եւ արժանացավ բազմաթիվ այլ մրցանակների: 2005 թ.-ին խումբն արժանացավ Ֆորբերգ-Շնայդեր հիմնադրամի «Բելմոնտ» մրցանակի, 2007 թ.-ին՝ Բորլետտի-Բուիտոնի հիմնադրամի գլխավոր մրցանակին, իսկ 2019 թ.-ին էլ դարձավ Ֆրանկֆուրտի երաժշտական մրցանակին արժանացած առաջին քառյակը:

Բարտոկի, Բեթհովենի, Դեբյուսիի, Հայդնի, Ֆորեի եւ Մենդելսոն եղբայրների ստեղծագործությունների ձայնագրություններն արժանացել են բազվաթիվ մրցանակների, այդ թվում՝ «Գրամոֆոն»-ի, BBC Music Magazine-ի մրցանակի, Midem Classic մրցանակի:

Անսամբլի նշանակալի ձեռքբերումներից է Բեթհովենի 16 լարային քառյակների ձայնագրությունը՝ ստեղծագործություններ, որոնք անսամբլը 2019 թ.-ի մայիսից 2020 թ.-ի հունվարն ընկած ժամանակահատվածում կատարել է աշխարհի հինգ մայրցամաքում: Այս ամբողջական ձայնագրությամբ «Էբեն» քառյակը տոնեց իր հիմնադրման քսանամյակը:

Քառյակի կազմից Պիեռ Կոլոմբեն նվագում է երկու գործիքով: Առաջինը Անտոնիո Ստրադիվարիուսի՝ 1717 թվականին ստեղծած «Պիատտի» ջութակն է, իսկ երկրորդը՝ Մատեո Գոֆրիլերի՝ 1736 թվականին ստեղծած գործիքը:

Գաբրիել լը Մագադյուրը նույնպես նվագում է երկու գործիք՝ երկուսն էլ Գուարներիի ձեռքով ստեղծված: Առաջինը ժամանակին պատկանել է Բարոն Ռոթշիլդին, իսկ երկրորդը ստեղծվել է 1740 թվականին Մարի Շիլեմի երկու ալտերից մեկը Ստրադիվարիուսի՝ 1734 թվականին ստեղծված «Գիբսոն» ալտն է:

«Բույրերը կարծես վերածվում էին ձայների, տարածության խորքերից լսվում էին արձագանքները, եւ չորսը նախ զգուշորեն միահյուսվում էին, ապա ջանասիրաբար ձուլվում իրար ու աշխուժորեն տարածվում: Դա մի աննկարագրելի փորձառություն էր»,- քառյակի մասին գրել է Seddeutsche Zeitung-ը 2023-ի մարտին:

Հ. ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՌԵԿՈՐԴ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Հայաստանի աթլետիկայի հավաքականի առաջատար վազորդ Երվանդ Մկրտչյանը Սերբիայի մայրաքաղաք Բելգրադի փակ մարզասրահում կայացած Belgrade Indoor Meeting 2024 մրցաշարում արծաթե մեդալ է նվաճել, ինչպես նաեւ Հայաստանի ռեկորդ սահմանել:

Մկրտչյանը 1500 մետր վազքատարածությունը հաղթահարել է 3:38.12 րոպեում, ինչն անկախ Հայաստանի ամենաբարձր արդյունքն է աթլետիկայում:

Հիշեցնենք՝ օրերս գյումրեցի մարզիկը դարձել էր Ստամբուլում անցկացված Բալկանյան երկրների ձմեռային առաջնության հաղթող՝ 1500 մետր վազքատարածությունում ցույց տալով 3:45.55 րոպե արդյունք:

Մկրտչյանն առաջին տեղն էր զբաղեցրել՝ հետեւում թողնելով Թուրքիայի երկու ներկայացուցիչների: Երվանդ Մկրտչյանն իրավունք է ստացել մասնակցելու նաեւ Գլազգոյի փակ մարզասրահում մարտի 1-3-ն անցկացվելիք աշխարհի ձմեռային վարկանիշային առաջնությանը:

ՆՈՐԸՆԾԱ ՉԵՄՊԻՈՆԸ

Ծանրամարտի Եվրոպայի կանանց առաջնության չեմպիոն Ալեքսանդրա Գրիգորյանը նշում է, որ յուրաքանչյուր մրցաշարում էլ լարվածություն կա, Եվրոպայի առաջնությունն էլ այդ առումով բացառություն չէր:

«Բնականաբար, լարվածություն կա ցանկացած մրցաշարում, բայց, անկախ դրանից, պետք է, որ լարվածությունը մի կողմ դնես, պայքարես, որ մեդալ ունենաս: Առաջին մոտեցումներն արվում էին մեդալ ապահովելու համար, սակայն հետո արդեն չեմպիոնության համար էի պայքարում»,- ասաց Գրիգորյանը:

Խոսելով իր առաջին ոսկե մեդալից՝ Գրիգորյանն ընդգծեց, որ մարզումների ժամանակ բարձրացրած քաշերը թույլ էին տալիս մտածելու մեդալի մասին, սակայն Պոկում վարժության ոչ այդքան հաջող ելույթից հետո փոքր հիասթափություն եղել է:

«Իմ կարծիքով՝ 19 տարեկանում ոսկե մեդալակիր դառնալը նորմալ է: Մեծահասակների մրցաշարերի երկրորդ անգամն էի մասնակցում, սակայն առավելագույնս լավ էի պատրաստվել ու դրական էի տրամադրված»,-ասաց Եվրոպայի նորընծա չեմպիոնը:

Գրիգորյանն իր հաջորդ նպատակներից մեկը համարում է Օլիմպիական խաղերում դրական արդյունք գրանցելը:

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող Եվրոպայի առաջնությունում Հայաստանի հավաքականի անդամ Ալեքսանդրա Գրիգորյանը Պոկում վարժությունում նախ բարձրացրեց 80 կգ: Երկրորդ մոտեցմամբ բարձրացրեց 85 կգ, սակայն մրցավարները չհաշվեցին մոտեցումը: Գրիգորյանը չկարողացավ բարձրացնել 85 կգ նաեւ երրորդ մոտեցման ժամանակ: Հրում վարժությունում Գրիգորյանը գերազանց արդյունքով՝ 105, 111, 115 կգ արդյունքով նվաճեց փոքր ոսկե մեդալ եւ երկամարտի 196 կգ արդյունքով հռչակվեց Եվրոպայի չեմպիոն:

● *Ապրիլի 2-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա աշխարհահռչակ ջութակահար Արա Մալիկյանի համերգը: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Ստելլա Մանուչարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, ապա պարտավո՞ր է արդյոք հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Անի Կիրակոսյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մոսկվայում վարորդն ամուսնության առաջարկություն է արել՝ տաքսիներով սիրտ պատկերելով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-1 -5 +5 +10
Կոտայքի լեռներ	-1 -4 +5 +9
Կոտայքի նախալեռներ	0 +2 +10 +12
Գեղարքունիք	-4 +1 +5 +10
Լոռի	+2 +6 +13 +18
Տավուշ	+4 +8 +19 +22
Արագածոտնի լեռներ	-2 -5 +5 +9
Արագածոտնի նախալեռներ	0 +2 +10 +15

Արարատ	-1 +4 +14 +17
Արմավիր	-2 +1 +14 +16
Վայոց ձորի լեռներ	-2 -5 +5 +8
Վայոց ձորի նախալեռներ	0 +3 +14 +17
Սյունիքի հովիտներ	+7 +10 +21 +23
Սյունիքի նախալեռներ	+1 +4 +14 +18
ԼՂՀ	+2 +4 +13 +17
Երեւան	+8 +10 +13 +15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.2.2024**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*